

## Կ Ա Ր Ծ Ի Ք

Սոսե Սերգեյի Խաչիբաբյանի «Ավագանկարչությունը՝ որպես կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման միջոց» թեմայով հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ ատենախոսության վերաբերյալ

Ս. Ա. Խաչիբաբյանի ատենախոսությունը նվիրված է անձի ստեղծագործական ակտիվության, ստեղծարարության և դրա հնարավոր զարգացման ու խթանման հիմնարար հարցերին: Ժամանակակից աշխարհում մեծացել է պահանջարկը ստեղծագործ մտքի, մտածելակերպի նկատմամբ: Արդիական է դարձել ստեղծարար ռեսուրսների բացահայտմանն ու զարգացմանը միտված հետազոտությունները:

Ատենախոսության հետազոտության նպատակն է բացահայտել ավագանկարչության դերը ստեղծարարության խթանման գործընթացում, կրտսեր դպրոցականների մոտ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից (որտեղ հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված վարկածը, աշխատանքի նորույթն ու նպատակը, խնդիրները, տեսամեթոդաբանական հիմքերը, տեսական և կիրառական նշանակությունը), երեք գլուխներից, եզրակացություններից: Աշխատանքը շարադրված է 147 համակարգչային էջի վրա: Հեղինակի կողմից օգտագործվել է 113 գիտական աղբյուրներ, որոնք ներառում են ինչպես նախկին, այնպես էլ ժամանակակից աղբյուրներ տարբեր լեզուներով, որոնցում լիովին արտացոլված են ուսումնասիրվող հիմնահարցերը:

Հեղինակը ատենախոսության առաջին գլխում մանրամասնորեն տեսական վերլուծության է ենթարկում ստեղծարարության էությունը, բովանդակությունը և այն խթանող հնարավոր ուղիները: Մանրակրկիտ ներկայացված է ստեղծարարության ինտեգրալ, բազմագործոն բնույթը: Հեղինակի կողմից քննարկման առարկա է դառնում մանկության շրջանում ստեղծարարության, որպես զարգացման նշանակալի ֆենոմենի, առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլխում, հեղինակի կողմից լուսաբանվում են ավագանկարչության էությունը, դերը և նշանակությունը հոգեբանական զարգացնող աշխատանքում, հեղինակը վերլուծում է արտթերապիայի, ավագաթերապիայի, առանձնահատկություններն ու ազդելու ձևերը

Երրորդ հետազոտական գլուխը ամփոփում է ատենախոսի ուսումնասիրությունների արդյունքները: Երրորդ գլխում ատենախոսը նախ հիմնավորել է աշխատանքի հետազոտական ասպեկտը, բնութագրել հետազոտության օբյեկտները, նկարագրել կիրառվող մեթոդիկաները: Վերլուծության մեթոդներ են հանդիսացել բովանդակային վերլուծությունը տեղեկատվության ընդհանրացմամբ և խմբավորմամբ, մաթեմատիկական վիճակագրական վերլուծությունը, ձևավորող գիտափորձը:

Տեսական և էմպիրիկ նյութի ընդհանրացման հիման վրա աշխատանքի հիմնական դրույթները ամփոփվել են եզրակացություններում:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հոդվածներում:

Աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց որոշ վրիպումներ և թերացումներ, այսպես՝

1. Համաձայն վարկածի, ավագանկարչության նպատակաուղղված կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանմանը: Հարց է առաջանում, արդյո՞ք ոչ նպատակաուղղված ավագանկարչության կիրառությունը չի կարող խթանել ստեղծարարությունը: Այս տեսանկյունից ելնելով կարծում ենք, որ առավել շահեկան կլիներ, եթե ստուգիչ խմբի նկատմամբ կիրառվեր ոչ նպատակաուղղված ավագանկարչություն:
2. Ատենախոսը մատնանշում է հեղինակային ծրագրի կիրառման մասին: Ֆորմալ առումով, եթե ծրագիրը «հեղինակային» է կոչվում, կամ կիրառվում է ատենախոսական աշխատանքում, որպես «հեղինակային ծրագիր» ապա ենթադրվում է, որ այդ ծրագիրը մշակվելուց հետո անցել է փորձաքննություն, հաստատվել է որևէ գիտական կառույցի կողմից: Ատենախոսության մեջ ներկայացված չէր, թե որտեղ, երբ և ում կողմից է այն երաշխավորվել կիրառության, որպես հեղինակային ծրագիր: Այլապես մենք գործ ունենք, ոչ թե հեղինակային ծրագրի, այլ հետազոտական աշխատանքի, գիտափորձի

պլանավորման հետ, որն էլ հավակնում է դառնալ այդպիսինը ատենախոսության հաջողության արդյունքում:

3. Երկրորդ դիտողությունը տրամաբանորեն հանգեցնում է երրորդ դիտողության, այն է, առկա է հակասություն չորրորդ և հինգերորդ խնդիրների միջև, հասկանալի չէ, ատենախոսության խնդիրն է «հեղինակային ծրագրի» մշակումը ատենախոսության գիտափորձի արդյունքում, թե ինչ որ «հեղինակային ծրագրի» արդյունավետության բացահայտումը, նույն պարագայում:
4. Աշխատանքը բավական կշահեր եթե հետազոտական ընտրանքը դասակարգվեր ենթախմբերի ըստ սեռի, կարծում ենք թեմայի շրջանականերում էական տարբերիչ հատկանիշներ կբացահայտվեին:
5. Ատենախոսության հետազոտական արդյունքների վերլուծության որակական կողմի ներկայացումը զիջում է քանակական վերլուծությանը իր բովանդակայնությամբ, հստակությամբ ու ամբողջականությամբ: Աշխատանքը կհարստանար, եթե թվային արժեքները որակական մեկնաբանություններ ունենային:
6. Կարծում ենք, որ ընտրանքի թվաքանակը սակավ է, չի բավարարում հիմնախնդրի բացահայտման պահանջներին:
7. Ինչպես կհիմնավորի ատենախոսը ստեղծարարության խթանման կարևորությունը կրտսեր դպրոցականի մոտ, մի գուցե չկա դրա կարիքը, անկախ ստեղծարարության անկման աստիճանից:
8. Հայտնի է, որ գոյություն ունեն այլ մեթոդներ ստեղծարարության խթանման համար, ինչպես կհիմնավորեք, կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման համար ավագանկարչության կարևորությունը, այլ կերպ, ինչով է պայմանավորված այս մեթոդի ընտրությունը, և ոչ մեկ այլ:
9. Եզրակացություն 5-ը, երկրորդ հասվածում ասում է, որ «Հեղինակային ծրագիրը ստեղծարարության բաղադրիչների վրա բազմաֆունկցիոնալ ու համակողմանի ազդեցություն ունի, ինչը ենթադրում է, որ.

- Ավագանկարչության մեկ առանձին տեխնիկայի կիրառումը նպաստում է ստեղծարարության միանգամից մի քանի բաղադրիչի խթանմանը»:

Նախ, ի՞նչ եք հասկանում «բազմաֆունկցիոնալ ազդեցություն» ասելով:

Ատենախոսության ողջ բովանդակությունից հասկանում ենք, որ մատնանշած

